

6386

576.12

9-13

§ 2004

Հ. Ս. Մու. Հ.

576.12
9-16

4V

9-13

Պ. Գաբրիելյան - by

Բ. Կարապետյան
Բուքուրյան
Յերեմյան
5/10 28

576.12
9-13

ԷԼՈՒՄԻՅԻՈՆ ՔԼԱՐԻԱ

ՄԱՍ Ա.
ՖԻՆ ԴԱՐՆԵՐԻՑ ՄՈՆԵՏԻ, ԴԱՐՎԻՆ

* Հեռագրի իրավունքով *

ՄԱՍ

100
22034

91

Բանձաձի հրատարակություն
N6 ՅԵՐԵՎԱՆ N6
1928

15196

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ.

ինչ է եվոլուցիան	3-4
Հին դար	5-11
Միջին դար	11-13
Նոր դար	13
Լիննեյ Կարլ	14-19
Կյուվիե ժորժ	19-25
եվոլուցիոն թեորիայի կոշմնակիցները.	
Քյուվիե	26-28
Երազմ Դարվին	28-29
Գեոթե	29-32
Լամարկ ժան	32-41
Ջարլզ Դարվին	42-50
Ֆրականուլթյուն	50.

Բաճախի Ապագետիչ.

Գրառնչվար N° Տերաժ (18.)

2004

1-2
 2-11
 11-17
 17
 17-18
 18-22
 22-24
 24-25
 25-28
 28-31
 31-32
 32-33
 33-34
 34-35
 35-36
 36-37
 37-38
 38-39
 39-40
 40-41
 41-42
 42-43
 43-44
 44-45
 45-46
 46-47
 47-48
 48-49
 49-50
 50-51
 51-52
 52-53
 53-54
 54-55
 55-56
 56-57
 57-58
 58-59
 59-60
 60-61
 61-62
 62-63
 63-64
 64-65
 65-66
 66-67
 67-68
 68-69
 69-70
 70-71
 71-72
 72-73
 73-74
 74-75
 75-76
 76-77
 77-78
 78-79
 79-80
 80-81
 81-82
 82-83
 83-84
 84-85
 85-86
 86-87
 87-88
 88-89
 89-90
 90-91
 91-92
 92-93
 93-94
 94-95
 95-96
 96-97
 97-98
 98-99
 99-100

$$(a-b-c)^2 = a^2 - b^2 - c^2 + 2ab + 2bc$$

$$(a^2 - b - a)^2 = a^2 - b^2 - 2a^2 - 2ab - 2a - 2bc - 2ac + 2bc$$

6-10-10-8-10-2

6-10-10-8-10-2

5. II.

== ԵՎՈԼՈՒՑԻՈՆ ԲԵՌՈՒՄ ==

1. ԵՆՆ Ե ԵՎՈԼՈՒՑԻԱՆ:

Եվոլուցիա - նշանակում է զարգացում: Եվոլուցիոն կամ զարգացման թեորիան նոր չէ: Եվոլուցիայի սկզբունքը հետաքրքրել է մարդկությանը դեռ վաղ ժամանակներից: Եվոլուցիոն թեորիայի հիմնական միզըն այն է, վոր բնության մեջ կայուն, անփոփոխ բան չկա՝ ամեն ինչ յենթակա յե մշտեօճնական, անընդհատ զարգացման: Բնությունն իր յերնք աշխարհներով՝ անկենդան, բուսական, կենդանական կազմում է մի ամբողջություն, յերեքն էլ իրար հետ կապված են սպգակցաբար, յերեքն էլ առաջացել են հիմնական սկզբնական նյութից:

Բնութայունը զարգացել է աստիճանաբար, վորոշ հաջորդականությամբ, նախ՝ անկենդան աշխարհը, ապա որգանական: Եվոլուցիայի սկզբունքը - բնության հիմնական որենքն է: Բնական բոլոր յերեվոլյութներն էլ յենթակա յեն դրան:

Աստիճաբաշխութայունը պարզեց, վոր մեր Յերկիքը, վորպես մի յերկնային մարմին, անկենդան մի կանգված՝ արդյունք է եվոլուցիայի, և զարգացել է սկզբնական միգապատից: Ավելի ու ավելի յե հաստատվում այն բանը, վոր յեղած բոլոր քիմիական պարզ տարրերն էլ զարգացել են սկզբնական հիմնական տարրից. մի գուցե ջրածինն Եր այդ հիմնական տարրը, վորի ներկայութայունը, յերկնային մարմինների աաղմերի՝ միգապատերում, ապացուցված է: Արեգակնային սիստեմը (Արևն իր մոլորակներով) նույնպես սկզբնական տիեզերական նյութի եվոլուցիայի արդյունքն է, և այդ եվոլուցիան չի

Այս գրքուկի նյութը տեղիւնակի՝ «Եվոլուցիոն թեորիա» գրքի առաջին պատմական մասն է: Յերկրորդ մասը պատրաստ է տպագրութայան համար. նա հետևյալ նյութն է պարունակում. I. Եվոլուցիայի ապացույցները: Եամեմատական անատոմիայից, Եաղմնաբանութայունից, պալեոնտոլոգիայից, կենսաշխարհագրութայունից (բիոգեոգրաֆիա). II. Դարվինի թեորիա. III. Մարգու Եագում. IV. Դարվինի սիստեմը.

Հեղինակ.

10. III. 28.

վերջացել, նա շարունակվում է:

Անգլիայի հռչակավոր բնագետ Ջարլզ Դարվինը վերջնականապես հիմնավորեց որգանական աշխարհի եվոլուցիայի գաղափարը: Բայց այդ գաղափարն ունի իր պարզապիսի պատմությունը. յեղել են Յագման, Խավարման յեվ վերջնական հաստատման շրջաններ:

Ընդհանրապես շատ շատերն են առաջադրել եվոլուցիայի գաղափարը, սակայն պիտի շեշտել, զոր այդ գաղափարը յերկու բնույթ ուներ: Վոմանք ընդունում էին, զոր բնութայն յերևույթները փոփոխական են, համաձայն էին, զոր բնութայն մեջ կայուն բան չկա, այլ մի յերևույթը փոխարինվում է մյուսով, որգանիվ մեկըն էլ են հաջորդաբար փոխվում. միևնույն ժամանակ նրանք շեշտում էին յերևույթների անկախությունը, հաջորդաբար հայտնվող տարրեր որգանիվների անազգակցությունը:

Ապա ուրեմն նրանց կարծիքով մի յերևույթ չի կարող առաջ գալ մի ուրիշ յերևույթից և որգանիվ մներն էլ (թեկուց աստիճանական ցարգով հայտնված լինելին՝ նախ պարզ ձեվերը, ապա բարդ), չեն պարգացել մեկը մյուսից:

Գիտության համար ավելի արժեք ունի կապակցական (ազգակցական) եվոլուցիայի գաղափարը, համաձայն այդ տեսակետի՝ որգանիվները մեկը մյուսից են պարգացել, հաջորդաբար պարգացող որգանիվներն ազգակցաբար կապված են, պարզ ձեվերից պարգանում են ավելի բարդ բարձր որգանիվները:

ՏԻՆ ԴԱՄ.

Հերակլիտ - մշտնջենական եվոլուցիայի գաղափարը: Եմպեդոկլ - Արիստոտել - սրանց եվոլուցիոն գաղափարները: Լուկրեցիոս Կարուս. նրա պոեմը:

Հնադարյան հույն և հռոմեացի գիտնականներից շատերը բնական այս կամ այն յերևույթը կամ հարյրն ուսումնասիրելիս՝ հաճախ կանգ էին առնում եվոլուցիոն տեսակետի վրա: Կյանքի Յագման հարցում շատ եր տարանված ինքնագոյացման գաղափարը, այսինքն՝ որգանիվների պարգացումը (եվոլուցիան) անկենդան, անորգանական նյութերից:

Խոսում էին և այն մասին, թե ինչպես են պարգացել բուսական և կենդանական որգանիվները, նույնիսկ մարդը:

Փոփոխականության, եվոլուցիայի սկզբունքը մանավանդ շեշտեց Հերակլիտը (535-475): նրա համար բնութայն մեջ կայուն բան չկար, ամեն ինչ յենթակա յե փոփոխականության մշտնջենական որենքին: «Պանտա թեյ» - «ամեն ինչ հոսում է, ամեն ինչ փոփոխվում» - այդպես եր ասում Հերակլիտը, այդպես եր նրա եվոլուցիոն գաղափարի հիմնական սկզբունքը:

Յեղան հնադարյան տեսություններից ամենասետաբերականն է Եմպեդոկլիտը (495-435). բանաստեղծ յերածիշտ և բնագետ): Թեև նրան իցուր են հնադարյան Դարվին անվանում, բայց և այնպես նրա մի ջանք գաղափարները հեռավոր նմանություն ունին Դարվինի գաղափարներին: Արիոգենեցի ջերմ կողմնակից լինելով՝ Եմպեդոկլը դրանով չի բավա-

կանանում: Իր եվոլուցիոն թեորիայով նա փորձում է ընդգծել որգանիվմների գոյացման, զարգացման և բազմաձևության դրդապատճառները:

Համաձայն նրա թեորիայի՝ բնության մեջ գոյություն ունին չորս հիմնական տարրերային ուժեր՝ հող, կերակուր, ջուր, քիմ. սրանք շեկավարվում են յերկու ուժերով (բնական որենքներով), վորոնք են՝ սեր - միայնակող ուժ և առեճուխություն - բաժանող, յետ միող ուժ: Նախ առաջ յեկալ անկենդան բնությունը, հետո զարգացավ բուսական աշխարհը, ապա և կենդանական աշխարհը: Որգանիվմներն առաջ յեկան ինքնագոյացմամբ և մաս-մաս, որինակ՝ առանձին գլուխներ, ձեռքեր, վոտքեր, իրան, աչքեր և այլն: Տարբեր որգանիվմների մասերն ազատ, անկանոն վիտում էին բնության մեջ, սիրո ազդեցությամբ մասերն իրար շփվելով՝ կենդանի միացումներ են կազմում, բայց յերբեմն առեճուխյան շնորհիվ շփվող մասերը, ընդհակառակը, անմիջապես անջատվում են, փուսափում միանալուց: Ձեռք գերակշռում էր սիրո ուժը, մասնիկները միանում էին, ստացվում էին պատահական որգանական միացումներ, այլանդակ ձեզեր, ինչպես՝ ձի - շան գլխով, յերկգլխանի արաբասներ, մարդանման կենդանիներ և ուրիշ այլանգակ կենդանիներ: Բայց բնությունը չի հաշտվում այդ այլանդակությունների հետ. որգանիվմների միջև գոյություն և կռիվ է սկսվում, այլանդակ ձեզերը չեն դիմանում կոպում. այն որգանիվմները, վորոնք չեն կարող համակերպվել շրջապատի պայմաններին, զոհ են գնում և տեղ տալիս նրանց, վորոնք ավելի նորմալ միացումներ էին ներկայացնում, ավելի

բնական որգանիվմներ էին: Ինչպես տեսնում ենք, եմպերոկի թեորիան խոսում է մի շարք բնական որենքների մասին, ինչպես՝ գոյության կռիվ, համակերպում - բնական պայմաններին, բնական ընտրություն (բնությունը վոչնչացնում է այլանդակ ձեերը, պահպանում նորմալ ձեերը, ավելի լավ համակերպվածներին):

Ասկայն սխալ կլիներ եմպերոկին անվանել հնարարյան Կարվին (ինչպես անում են վոմանք): Եմպերոկի եվոլուցիոնիվմը միմիայն հուցորդական, առեճուխյան զարգացման մեջ է, բայց նա չի շեշտում որգանիվմների փոխարարձ ազդակցական կապակցությունը: Որգանիվմները վոչ թե մեկը մյուսից են զարգացել, այլ իրարից բոլորովին անկախ, ինքնագոյացմամբ: Ասկայն որգանիվմների առաջ գալը եվոլուցիոն բնույթ ուներ, այսինքն՝ նախ պարզ ձեզերն են զարգացել, ապա բարդ տեսակները:

Ավելի հռչակ ուներ բնագետ փիլիսոփա Արիստոտելը (384-322): Բազմակողմանի և բազմատեղյակ բնագետ է նա: Իվուր չեն նրան բնագիտության նախահայր անվանում: Բայի բնագիտական գործնական հետախույզություններից, նա գրում է նաև փիլիսոփայական, տեսական բնույթ կրող աշխատություններ: Դարկ է, վոր այդ խոշոր փիլիսոփան չեր կարող չը խոսել և որգանիվմների եվոլուցիայի մասին: Ընդհանուր առմամբ նրա եվոլուցիոն թեորիան հիշեցնում է եմպերոկի թեորիան:

Ընդունելով աբիդենեյի գաղափարը՝ նա շեշտում է անկենդան և կենդանի աշխարհների միանականությունը: Հատ Արիստոտելի անկենդան բնությունը:

Եից արհոգենեցով առաջ յեն գալիս նույնիսկ բարդ
որգանիվմներ, ինչպես որինակ՝ գորտը, ոճը - տիղմոյ:
խոսելով բնութայան յերեք աշխարհների հաջորդական
վարգայման մասին, նա շեշտում է, վոր նախ անկեն-
դան բնութայունն էր, հետո առաջ յեկավ բուսական
աշխարհը, ապա կենդանիները, վոր արհոգենեցով վար-
գայան անկենդան նյութից, իսկ այդ բոլորից հետո
բնութայան պասկը՝ բարձրագույն որգանիվմ՝ մարդը:

Արիստոտելը վոչ մի ազգակցական կապակցությու-
ն չի տեսնում որգանիվմների մեջ. մարդը, կենդանին...
բույսը, - մի խոսքով բոլոր որգանիվմներն առաջ են
յեկել իրարից անկախ, ինքնուրույն ուղիով: Հետևյալ
կերպով է նա բնորոշում բույսը, կենդանունն և մար-
դուն. բույսը համեմատաբար անկենդան նյութի հետ,
շնչավոր արարած է, վորովհետև նա սնվում է, բազ-
մանում, բայց յնթե համեմատենք կենդանիների հետ
- անշունչ է, վորովհետև զուրկ է զգայողութայունի:

Բույսերից հետո, իսկական կենդանիներից առաջ
վարգայել են միջակա որգանական ձեւերը, կամ
բույս-կենդանիները, ինչպիսիքներիցն են կորալները:*)
կյանքը վարգայել է եվոլուցիոն կարգով, սկզբում ամե-
նապարզ ձևերը, հետո բարդ որգանիվմները և վերջը՝
բոլոր ստեղծագործութայունների գերագույն արդյունք՝
մարդը: Մարդը վոչ միայն կարող է սնվել, զգալ,
մտածել կենդանիների նման, այլ և ընդունակ է վե-
րացական մտածողութայան: Իր կառուցվածքով մարդն
ամենակատարյալ ձևն է, նա պահվում է ուղիահայաց,

*) Կորալներն (մարդան) իսկական կենդանիներ են, բայց Արիս-
տոտելի համար նրանք բույս-կենդանի, ինչպես ինքն էր
ասում՝ զոոֆիտներ:

ունի ավելի մաքուր արյուն, մեծ ուղեղ և մարմնի բարձր
ջերմաստիճան: Բնութայան ստեղծագործութայունների մեջ
Արիստոտելը վորոշ նպատակահարմարություն, նախամը-
տածված էրագիր է տեսնում: Բնութայունը, որգանիվմներ
ստեղծագործելիս մի հիմնական նպատակ էր գրել առաջ
բերել կատարյալ, գերագույն մի տեսակ, վորպիսին էր
մարդը: Ամեն ինչ բնութայան մեջ գոյութայուն ունի մար-
դու համար:

Այսպես է ընդհանուր առմամբ Արիստոտելի եվոլուցիոն
թեորիան: Ինչպես տեսնում ենք, նա չէր ընդունում կապակ-
ցական եվոլուցիա. որգանիվմները վարգանում են, ճիշտ
է, աստիճանական կարգով, պարզից դեպի բարդ ձևերը,
բայց իրարից անկախ, առանց մեկը մյուսից առաջա-
նալու:

Յեթե ցանկանում ենք լրիվ պատկերացնել, թե ինչ-
պիսի հայացքներ, ինչպիսի՝ բնագիտական գաղափարներ
են ունեցել հնագույն գիտնականները, բավական է
կարդալ հունական բանաստեղծ՝ Հուկրեցիոս Կարուսի «Իրե-
րի բնութայունը» (De rerum naturae) պոեմը: Բանա-
ստեղծական հանգերով նա նկարագրում է իր նախորդ
և ժամանակակից գիտնականների թեորիաները: Բնու-
թյան վերաբերյալ էլ հարց չի մնացել, վորի մասին
չխոսեր, լուսաբանութայունը չտար: Ի միջի այլոց
կանգ է առնում նա հետևյալ հարցերի վրա. յերկրի և
յերկնային մարմիների ծագումն ու վարգացումը, նյու-
թի միասնականութայունը, փոխակերպութայունը, մշտնջե-
նականութայունը և բավական մանրամասն - որգա-
նիվմների, մարդու ծագումն ու վարգացումը (եվո-
լուցիոն թեորիան): Հուկրեցիոս Կարուսն ինքնուրույն
գիտնական չէր, սիրող բնագետ էր, բայց վարպետ
և հետաքրքրական ձևով և մանրամասնորեն ամփո-

Քել Ե Տնադարյան գիտության գաղափարները, նրա պոեմը - բնության մի հանրագիտարան էր:

Հարցեր:

- 1.- Ինչ է եվոլուցիան.
- 2.- Ինչ յերևույթներ կարելի լին Բայատրել եվոլուցիոն տեսակետից:
- 3.- Վերջնականապես ո՞վ հաստատեց եվոլուցիայի գաղափարը:
- 4.- Ինչպես կարելի լին հասկանալ եվոլուցիայի գաղափարը:
- 5.- Ինչ բնույթի եվոլուցիոն գաղափարն արժեքավոր է գիտության համար:
- 6.- Ի՞նչ գաղափարներ էին առաջադրել Տնադարյան գիտնականները:
- 7.- Ինչ է աբիոգենեզը:
- 8.- Ինչ էր ասում Հերակլիտը:
- 9.- Ինչն է եմպեդոկլի եվոլուցիոն թեորիան:
- 10.- Ինչ բնական որոնքների մասին էր խոսում նա:
- 11.- Ինչու չի կարելի նրան անվանել եվոլուցիոնիստ Դարվինյան մտքով:
- 12.- Ո՞վ է Արիստոտելը:
- 13.- Ինչպես էր պատկերացնում աբիոգենեզը:
- 14.- Ինչպես էր հասկանում եվոլուցիան:
- 15.- Ինչ հաջորդականությամբ են հայտնվել բնության յերեք աշխարհները:
- 16.- Ի՞նչով են իրարից տարբերվում անկենդան մարմինը, բույսը, կենդանին:
- 17.- Ինչ է վոռֆիտը:
- 18.- Ի՞նչ տեղ է տալիս նա մարդուն - որգանական աշխարհում:
- 19.- Ինչով է մարդը տարբերվում կենդանուց:
- 20.- Ընդունում է նա բնության յերևույթների նպատա-

կահարմարություն. և ի՞նչպես:

21.- Ո՞վ է Լուկրեցիոս Կարուսը:

22.- Ինչ հարցեր է շոշափում իր պոեմում:

ՄԻՋԻՆ ԴԱՐ.

Միջին դարը և գիտություն: Ալքիմիկոսներ: Աբիոգենեզ: Ելուֆի փոխակերպության գաղափարը:

Թե գիտության, թե մանավանդ բնագիտության համար միջին դարը կորցրած ժամանակ էր: Գիտության խավարման, հալածանքի շրջանն էր այդ: Կրոնի, յեկեղեցու տիրապետության շնորհիվ չէր կարելի բնության յերևույթներին բնական Բայատրությունը տալ: Հալածվում էին նրանք, վորոնք ժխտելով կրոնական մեկնաբանությունը, համարձակվում էին խոսել որգանիվների եվոլուցիայի մասին և հատկապես մարդու կենդանական ծագման մասին: Նույնիսկ Տնադարյան գիտնականների եվոլուցիոն գաղափարները հակակրոնական էին համարում, նրանց կողմնակիցներին հալածում, Բայց միևնույն ժամանակ այդ նույն գիտնականների աշխատություններն ոգտագործում էին, թարգմանում սեփական ուղղումներով, փոփոխում իրանց աշխարհայացքի համառայն:

Սակայն եվոլուցիայի սկզբունքը, նույնիսկ մուայլ միջնադարում չէր կորցրել իր կենսունակությունը: Նրա ազդեցությունը նկատվում էր ալքիմիկոսների աշխատանքների վրա: Միջնադարյան ալքիմիկոսները (մեր քիմիկոսների նախորդները) մի շարք փորձերով ճգնում էին յերկու խոշոր սկզբունքային հարցեր լուծել: Հարցերից մեկն էր՝ Ելուֆի փոխակերպությունը, մյուսը՝ կյանքի ինքնագոյացումը (աբիոգենեզ): Բուն եվոլուցիոն թեորիայի համար մեծ սկզբունքային նշանակություն ունի

այդ հարցերի լուծումը:

Ալքիմիկոսները փորձում էին քիմիական փոխակերպութեան միջոցով մեկ նյութից ստանալ մի ուրիշը, այն է՝ ալնիվ մետաղ՝ վոսկի: Էստ յերևոյթին նրանք յենթադրում էին, վոր նյութերի մեջ անպայման կապակցութիւն կա, վոր նյութը միասնական է: Զարմանալի էլ չէ, վոր Տենց այդ մտքից յենելով՝ ալքիմիկոսները հնարավոր էին համարում վոսկի ստանալ մի ուրիշ մետաղից: Քիմիայի արդի նվաճումները գալիս են հաստատելու, վոր իսկապես ալքիմիկոսների փորձերը վորոշ գիտական հիմք ունէին: Այժմ քիմիկոսները չեն կասկածում, վոր քիմիական տարրերի մեջ անպայման կապակցութիւն կա և շատ հաճախակա՛ն է, վոր նրանք բոլորն էլ մի սկիզբնական տարրի եվոլուցիոն վարգայման արդյունք են: Կգա ժամանակ, յերբ ալքիմիկոսների գիտական բնոյթն ունեցող յերազը կիրագործվի և վոսկին արՏեստական ձևով կստացվի մի ուրիշ տարրից:

Հարցեր:

1. Միջնադարը և գիտութիւնը:
2. Ովքեր էին ալքիմիկոսները:
3. Ինչ գաղափարներ էին Տետաբրքորում նրանց:
4. Ի՞նչ են ասում քիմիայի արդի նվաճումները:

ՀՈՐ ԴԱՐ

Ժամանակի ապդեցութիւնը: Եվոլուցիոն թեորիայի դրութիւնը: Կարլ Լիննէյ: Միջէլիւնէյան և Էիւննէյան դասակարգութիւն: Կրկնակի անվանակոչութիւն: Դասակարգութեան հիմունքները: Լիննէյի տեսակետն եվոլուցիայի մասին: Ժորժ Կյուվիե: Պալեոնտոլոգիան մինչև Կյուվիե՛ն և նրա որոշ: Հատկանիշների կորրեկցիայի որե՛նքը: Կատաստրոֆների թեորիան: Կյուվիեյի ջայրահեղ Տեոեվոչները:

Նոր դարում, չնայած մի շարք աննպաստ պայմանների, բնագիտութիւնը նորից գրավում է գիտնականներին ուշադրութիւնը: Հնադարյան գիտնականների աշխատութիւններն այլևս չեն կարող բավարարել ժամանակի պահանջին: Իսկ միջնադարյան Տեքիասթային, ֆանտաստիկ «Տետապոսութիւններն» առավել ևս անբավարար էին: Գիտնականները, թնե կբաշխում էին գըլ-իավորապես մասնագիտական հարցերով, սակայն անտես չէին առնում և տեսական պրոբլեմները, ինչպես որինակ՝ եվոլուցիոն թեորիան, մարդու, կյանքի ջագման, վարգայման հարցերը: Եվոլուցիոն թեորիան, քաղմաթիվ ուժեղ հակաըակորդներ ուներ: Եվոլուցիոնիստների նհալածում էին, դրանով էլ բացատրվում է այն հանգամանքը, վոր եվոլուցիոն թեորիայի կողմնակիցներն անհամարձակ էին և հաճախ վիչոզաբար հրաժարվում էին իրենց հիմնական սկզբունքներից: Նրանց անվճռական յելոյթները հաջողութիւն չէին ունենում: Յեկեչեցու տիրապետութիւնը տակավին ուժեղեր նրա և տիրող դասակարգի շահերի ընդհանուր լինելը՝ եվոլուցիոն գաղափարի վարգայմանը և ջավալմանը հնարավորութիւն չէին տալիս: Եվոլուցիոն թեորիան շեշտում էր բնական յերևոյթների անկայու-

Նությունը, մշտնջենական փոփոխականությունը: Իհարկե այդ «Տերեփկոսային», «անասովա՛ն» գաղափարները կարող էին մարդկանց գլուխներում անցանկալի մտքեր հարուցել և յեկեղեցու, տիրող դասակարգի, տիրապետող իրավակարգի անկայունության մասին: Դրա շնորհիվ էլ առաջ յեկան այն բոլոր հալածանքները, վորոնց յենթարկվեցին ապատամիտները և հատկապես եվուլուցիոնիստները:

Գիտնականների տնտեսական կախումը պետութայնուհից քիչ չապրեց նրանց վրա, և այդ պատճառով շատ-շատերը չէին համարձակվում դուրս գալ տիրող աստվանաբանական գաղափարների դեմ. վոմանք էլ աշխատում էին գիտության և կրոնի սահմանները հարթել, վերացնել: Քչերը կարոչապան մինչև վերջ, առանց տատանումների, վճռականորեն պաշտպանել գիտական գաղափարները:

Սակայն եվուլուցիոն թեորիան այնքան կենսունակ էր, վոր չնայած հալածանքներին, քանի գնում Ցավալվում էր ու նոր կոչմանկիցներ գրավում: Ընորոշ է, վոր նույնիսկ այնպիսի նշանավոր հակաեվուլուցիոնիստներ, խոշոր գիտնականներ, ինչպիսիք են Կյուպիե և Կիննեյը — խոշոր չափով նպաստեցին եվուլուցիոն թեորիայի վարգայման:

ԿԱՐԼ ԿԻՆՆԵՅ (1702-1788).

Կիննեյը - շվեդացի բուսաբան - առաջինն էր, վոր գիտականորեն մշակեց որգանիվմների դասակարգութայն հարցը: Համաձայն դասակարգութայն որգանական աշխարհը բաժանվում է խմբավորումների, տարբեր տեսակի և մեծութայն միավորների: Այդպիսով ավելի հեշտա-նում է որգանիվմների ուսումնասիրութայնը և որգա-

նական աշխարհի լրիվ պատկերացումը: Կիննեյի որոջ կենդանիների և բույսերի այնքան շատ անուններ էին կուտակվել, վոր նա իր դասակարգութայնմբ բավարարեց ժամանակի հրատապ պահանջը:

Մինչ Կիննեյը բնագետ հոննեն էր (1720-1793), վոր առաջ բերեց դասակարգութայնը և առաջին անգամ փորձեց վորոշ սիստեմի վերանել որգանական աշխարհը, բայց նրա դասակարգութայնը գիտական հիմք չուներ և պատահական բնույթ էր կրում: Նրա ամբողջ դասակարգութայնը աստիճանների ձևով էր կա-ման և ընդգրկում էր վոչ միայն որգանական, այլ և անորգանական աշխարհը: Խմբավորումները, հաջորդաբար մեկը մյուսի յետևից էին դասավորված: Ամենավերին աստիճանի վրա մարդն էր, սրանից նեքև՝ մարդանման կապիկները, ապա իրար հաջորդում էին՝ սովորական կապիկները, չորքոտանիները (այդպես էր հոննեն անվանում մնայալ կաթնասուններին), թռչուններ, ձկներ, ոձեր, խեցիավորներ, միջատներ, բույսեր, լեռնային տեսակներ, հանքեր: Իհարկե այդորինակ դասակարգութայնը գիտական արժեք չուներ: Այդ փորձ միայն այն է ցույց տալիս, վոր ըստ յերևույթին փաստական տեղեկութայնուններն այնքան շատացել էին, վոր կարիք էր վգայվում նրանց վորոշ սիստեմով կարգավորել:

Կիննեյի դասակարգութայնը բոլորովին այլ բնույթ էր կրում. նա Ցառի նման էր — բազմաթիվ մեծ ու փոքր ճյուղավորութայններով: Նրա դասակարգութայն հիմնական միավորներն են. դառա-ամենախոշորը, ապա — ցարգ, վոր բաժանվում է սեռերի, սեռը — տեսակների և վերջապես տեսակը՝ այլաձև ու թյուևների: Իր դասակարգութայն մեջ Կիննեյը մտրեց

կրկնակի անվանակոչությունը՝ այդ նորույթյունը մինչև այժմս ել պահպանված և ընդունված է գիտության կողմից: Ամեն մի որգանիվմին նա տալիս է յերկու անուն (կրկնակի կոչում)՝ սեռի և տեսակի: Այժմյան դասակարգության մեջ մտցված է մի նոր միավոր ևս, այն է՝ զեռ (Семейство), վոր կարգի և սեռի մեջ տեղ է ընկնում: Համաձայն այդ դասակարգության որգանիվմին տալիս են զեռի և սեռի անունները: Չարվենք որինակով: Դասակարգության միավորներն և առհասարակ որգանիվմինն անվանվում են միջազգային գիտական-լատինական լեզվով: Բերենք յերկու որինակ. 1 կատուների զեռը (համաձայն էիննեյի՝ կատուների սեռ) - Felidae (Ֆելիդե). սրան պատկանում են կատու (Felis catus - Ֆելիս կատու), վագր (Felis tigris - Ֆելիս տիգրիս), առյուծ (Felis leo - Ֆելիս լեո) և այլն: Առաջինը զեռի անունն է (ըստ էիննեյի՝ սեռի), յեկրորդը - leo - սեռի անունը (ըստ էիննեյի՝ տեսակի):

2. Ծների զեռը (ըստ էիննեյի՝ սեռը) - Canidae (Կանիդե), սրան պատկանում են Canis lupus (Կանիս լուպուս) - գայլ, Canis vulpes (Կանիս վուլպես) - առվես և այլն: Բերենք չիվ դասակարգության մի որինակ. կատուն, առյուծը, վագրը - տարբեր տեսակներ՝ համախորմբ. վաճ մեկ միավորի մեջ կազմում են կատուների սեռը, այս սեռը, շների սեռը (և մի շարք ուրիշ կազմում են փշատիչների կարգ, այս կարգը և մի շարք ուրիշ կարգեր՝ որինակ սմբակավորներ և այլն կազմում են կաթնասունների դասը. այս դասի մեջ են համախորմբ. այն կենդանիները, վորոնք իրանց ձագերին կաթով են կերակրում: Ցեղ այս ձևով էիննեյը ստորաբաժանում է ուրիշ դասերի կենդանիների:

1005
506

Դասակարգության միավորները կազմելիս, էիննեյը գրկ-խափորապես հիմնվում էր որգանիվմինների արտաքին կառուցվածքի վրա, ի նկատի յեր առնում արտաքին հատկանիշների նմանությունը: Իսկ բույսերի նկատմամբ մե՛ս նշանակություն էր տալիս ճաշիկների նմանությանը և մանանդ նկատի յեր առնում նրանց առեջքների և վարսանդների քանակի նմանությանը: Այդ տեսակետը նրա դասակարգության բացասական կողմն էր: Հետագայում պարզվեց, վոր ղեկավարվել լոկ արտաքին նմանություններով չի կարելի, քանի վոր կան որգանիվմիններ, վոր արտաքուստ շատ նման են, բայց իրապես բոլորովին տարբեր տեսակներ, նույնիսկ զեռեր, դասեր են: Վերջիններ, որինակ, Տեռն կետն ու ձուկը. արտաքին ձևով միմյանց շատ են նման և շատ շատերը կետին ձուկ են անվանում, մինչ դեռ նրանք տարբեր դասերի կենդանիներ են. կետը - տաքարյուն թռչաշունչ կաթնասունն է, իսկ ձուկը - սառնարյուն, քիմոխտներով շնչող կենդանի: Մարմնի ներքին կազմությանմբ նրանք շատ են իրարից տարբերվում:

Այժմյան, ավելի գիտական դասակարգությունը (հիմնական կետերով նման էիննեյի կազմածին), բայց արտաքին նմանություններից, ի նկատի յե առնում և մե՛ս նշանակությունն է տալիս մանավանդ մարմնի ներքին կառուցվածքին, ֆիլոլոգիական հատկություններին և սաղմնաբանական նմանություններին: Այնուպես տեսակի, կարգի կամ զեռի մեջ կարող են լինել այնպիսի որգանիվմիններ, վորոնք թեև արտաքուստ շատ են տարբերվում, բայց ներքին կազմությանմբ նման են և հաճախ այդ նմանությունն ավելի յե շեշտվում սաղմնային վարգայման ժամանակ: Էիննեյի դասակարգության մեջ շատ սխալներ կան:

Բայց Լիննեյը կարիք էլ չուներ խորացնելու որգանիւմների նմանութիւնը, քանի վոր չէր ընդունում որգանիւմների ազգակցութեան գաղափարը: Նա իր դասակարգութեանն առաջարկեց լոկ հարմարութեան տեսակետից և դրանով ամենևին մտադիր էլ չէր որգանիւմների ազգակցութեանն ապացուցել:

Լիննեյի արած գործը մեծ արժեք ունի: Նրա դասակարգութեան մեջ մարդն առանձնահատուկ, ինքնուրույն տեղ չունի: Արտաքին նմանութեան պատճառով մարդուն տեղավորեց այն խմբում, վորի մեջ էին և մարդանման կապիկները: Իհարկե նա դրանով ամենևին չէր ցանկանում շեղուկ մարդու և կապիկ ազգակցութիւնը. նա ցուցադրեց միմիայն ներքին արտաքին նմանութիւնը: Յետե կատուի, առյուծի, վագրի տեսակները համախմբված են մեկ կատուների սեռի մեջ, - դրանով Լիննեյը չէր ուզում ասել, թէ նրանք ազգակիցներ են և վարգայել են մեկ ընդհանուր նախահորից: Մեկ սեռի մեջ համախմբված տեսակներն անազգակից են, բոլորովին անկախ, ինքնուրույն ճագումն ունին և չեն առաջացել մեկ ընդհանուր նախահորից:

Որգանիւմների ճագման մասին Լիննեյը հետևյալ միտքն էր հայտնում. «գոյութիւն ունին այնքան որգանական տեսակներ, վորքան վոյգ հենց սկզբից ստեղծել էր արարիչը»: Արեմն, որգանիւմներն իրենց ստեղծման որից անփոփոխ են մնացել, միայն սերնդե սերունդ բազմանալով շատացել են: Արդոյդ Լիննեյը համոզված էր ասում այդ, թէ ակամա զիջողութիւնն էր տիրապետող հայեցակետին - վիճելի հարց է: Սակայն բիւրգիայի պատմագիրներից վոմանք կարծում են, թէ Լիննեյը չէր կարող բոլորովին ժխտել փոփոխականու-

թեան գաղափարը, քանի վոր հենց նոյն Լիննեյն ասում էր, թէ նոր տեսակներ կարող են առաջ գալ վուգավորութեան շնորհիվ և ամեն մի տեսակ, նրա կարծիքով, յերկու ուրիշ տեսակի միջակա ձևն է:

Չնայած Լիննեյի հակաեվոլուցիոն մտածելակերպին, նրա դասակարգութեան մի շարք թերութիւններն, այնուամենայնիվ պիտի շեղուկեմք, վոր գիտական դասակարգութեան հիմնադիրը, թերևս իր ցանկութեան հակառակ, մեծ չափով վարկ տվեց եվոլուցիոն թերութեան պարզացմանը: Իհարկե, եվոլուցիոնիստներն ոգտագործեցին նրա դասակարգութիւնը: Բնութեան առնելով յեղան միավորները՝ ուսումնասիրելով, որինակ, տվյալ սեռի մեջ համախմբված որգանիւմների ներքին կառուցվածքը՝ ֆիզիոլոգիական, անատոմիական և սաղմնաբանական նմանութիւնները՝ պարզեցին նրանց լրիվ նմանութիւնը. դրա հիման վրա էլ, բնական է, առաջ պիտի գար այն միտքը, թէ հիշյալ որգանիւմներն ազգակից են և վարգայել են մի ընդհանուր նախահորից:

Որգանիւմների ազգակցութեանն ապացուցվում էր հաստատական անատոմիայի, ֆիզիոլոգիայի, սաղմնաբանութեան տեսակետներից: Այդպիսի ուսումնասիրութեան ժամանակ, Լիննեյի դասակարգութեան այս կամ այն միավորը քննելիս՝ պարզվեցին յեղան սխալները: Լիննեյան դասակարգութիւնը ստուգման և փոփոխութեան յենթարկվեց, բայց հիմնական սխալն այժմ էլ պահպանվեց:

43 ՈՒՎԻԵ ԺՈՐԺ . 1768-1832.

Կյուվեն կենդանաբան և պալեոնտոլոգ էր:*) Նրա

*) Պալեոնտոլոգիան (հնաբանութիւն) ուսումնասիրում է յերկրակեղևում գտնված բրանտները:

չնորսիվ գիտական բնույթ ստացավ յերիտասարդ գիտություն - պաշտոնտիրոգիան : նրա որոջ և նրա ջանքերով վերջնականապես հաստատվեց, վոր յերկրակեղևի շերտերում գտնված բրանոները (գարաեոներ, կամախքներ, վոսկրների մնացորդներ, հեթքեր՝ տպագրված լեռնային տեսակների վրա) վաղեմի, հնադարյան որգանիքմների իսկական մնացորդներ են : Մինչև կյուվիեն գիտնականները գտնված բրանոների գոյությունը վերագրում էին աստղերի ազդեցության, ինչ վոր ֆանտաստիկ ուժերի, կամ թե ինչ վոր «բեշմնավորիչ ուժի» ներգործութայան, վորի շնորհիվ իբրև թե անորգանական մարմինները կենդանիների ձև են ընթանում : Երչտե, կյուվիեյից առաջ էլ կային հասվագյուտ գիտնականներ, վորոնք հասկացել էին բրանոների բուն էյությունը և նայնպես համարում էին նրանց իսկական որգանիքմների մնացորդներ : Այդպես էին մտաչում հնադարյան գիտնական Քսենոֆանը, ՔVIII դարի հռչակավոր նկարիչ Կեռնարդո դա-Վինչին :

Եվոլուցիոն թեորիայի համար բրանոներն իսկական կենդանիների մնացորդներ համարելը չափազանց մեծ նշանակութուն ունի : Միայն կյուվիեն, վորպես խոշոր գիտնական, կարողացավ համոզել գիտնականներին - մեկ ընդ միշտ թողնել ֆանտաստիկ, վոչ գիտական տեսակետը՝ բրանոների էյության նկատմամբ : Հարպին լորջ մոտե նայով՝ իհարկե կյուվիեն չեր կարող հրաժարվել բրանոների ուսումնասիրությունից : նա այնքան հմուտ կենդանաբան էր և համեմատական անատոմիային՝ տեղյակ, վոր իդարից բաժանված, վանազան տեղերում գտնված վոսկրները միայնելով կարողանում էր ամբողջ

չ համեմատական անատոմիան էլ կյուվիեյի հիման գիտությունն է, վորը վրաջվում է որգանիքմների մարմնի կազմության (անատոմիայի) համեմատական ուսումնասիրությամբ :

զական կմախքներ կազմել . մի քանի բնորոշ վոսկրների հիման վրա նա մոտավորապես պատկերացնում էր, թե ինչպիսի որգանիքմ պիտի լիներ մնացորդների տերը : Այդքանում նրան ոգնեց իր առաջադրանք՝ հաշտեալեռչանդի Կորդեշայիչա կոչված որմնքը, համաձայն վորի որգանիքմների տարբեր հատկանիշներն իրար հետ վորոշ կապակցութայուն ունին, մեկի վարգացումը, փոփոխութայունը կարող է մեկ կամ մի շարք ուրիշ հատկանիշների փոփոխութայուն առաջ բերել : Ատամների կազմութայան հիման վրա մոտավորապես կարելի յե ասել, ինչով է սնվում տվյալ կենդանին, ապա սննդի համեմատ հնարավոր է դաննում և առհասարակ անդառական գործարանների ինչպես լինելը պատկերացնել : Յեվ այդպիսի կապակցութայունների շատ ուրիշ որինականեր կարելի յե տեսնել որգանիքմի մեջ :

Յեվ վարմանայի էլ չէ, վոր կյուվիեն մի քանի մնացորդների հիման վրա կարողանում էր յենթադրել կենդանու պատկերը : Եատերին վարմացնում էր այն հանգամանքը, թե ինչու գտնված մնացորդները չէին նմանվում ժամանակակից կենդանիներին : վորովհետև որգանիքմների փոփոխականութայան գաղափարն ամենևին ընդունված չեր, շատերը դժվարանում էին հասկանալ, թե ինչիցն է, վոր յերկրաբանական անսյալ դարաշրջաններում բուրոովին այլ տեսակի կենդանիներ էին ապրում : Այս մտքի հետ հակաեվոլուցիոնիստները չէին կարող հաշտվել :

Համաձայն գտնված բրանոների կարելի յեր յենթադրել, թե վաղեմի ժամանակներում ուրիշ տեսակի որգանիքմներ են յեղել, ապա ուրեմն որգանական աշխարհը փոփոխութայան է յենթարկվել : Այս գաղափարը հակասում էր տիրող կրոնական տեսակետին :

Կյուվիենն չի ժխտում որգանհիւմների անկայունութիւնը, նա համաձայն է, վոր միշտ ել միւնուցն որգանհիւմները չեն յեղել, յերկրի վարգայման ընթացքում որգանական աշխարհը փոփոխութեան է յենթարկվել. այլ կերպ չեր կարող դատել նա, քանի վոր նրա կարծիքով գտնված որգանական բրանոներն իսկական կենդանիների մնացորդներ էին:

Կյուվիենն դեմ չեր ընդհանրապես եվոլուցիոն գաղափարին, քայքայ չեր կարող հաշտվել այն բանին, թե կյանքը մեկ անգամ է առաջ յեկել, ապա եվոլուցիոնաբար վարգայել ու փոփոխվել: Փարիզի շրջակայքի իրարից տարուկ կերպով սահմանված յերկրաբանական դարաբանների շերտերն ու նրանց մեզ գտնված որգանական բրանոներն ուսումնասիրելիս՝ նա յեկավ այն յեղրապայութեան, վոր որգանական աշխարհը վոչ թե մեկ անգամ է առաջ յեկել ու վարգայել, այլ մի քանի անգամ իրարից բոլորովին անկախ: Բուն եվոլուցիոնիստների արծիքով թե անյայտի և թե ներկայիս բոլոր որգանիւմներն ազգակից են իրար, որգանական աշխարհը մեկ կլբնական աշբյուրից է առաջ յեկել և ապա եվոլուցիոնաբար վարգայել, փոփոխվել: Այդ տեսակետին Կյուվիենն համաձայն չեր: Կյուվիենն հակաեվոլուցիոնիստ էր այնպիսի, վորչափ չեր կապում իրար Տեո տարբեր յերկրաբանական դարաշրջանների կենդանիներին: Սակայն փաստերը սկսասում էին նրա տեսակետին: Հակասութիւնը փարաբոլը համար նա առաջադրում է իր «Չառուստորոփերի թեորիան»: Համաձայն այդ թեորիայի՝ մեր յերկրն ապրել է մի շարք սկայական Տեղաշրջումներ: Երկրիս մակերևույթը մի քանի անգամ յենթարկվել է տարուկ փոփոխութիւնների, այս կամ այն մասում վոչընչացել են կենդանական և բուսական աշխարհները: Յեկ

ամեն մի Տեղաշրջումից Տեոո նորից եր առաջ գալիս որգանական աշխարհը, նոր կենդանիներ և բույսեր հայտնվում: Յերկու տարբեր յերկրաբանական դարագլուխների որգանական աշխարհների միջև ամենեին կապակցական ազգակցութիւն չկա: Յյուրաքանչյուր դարագլխի որգանիւմներն առաջ էին գալիս, հայտնվում ուրիշ տեղերից կամ ստեղծվում բոլորովին իրարից անկախ: Մեկ դարագլխի որգանական ձևերն առնչութիւն չունին վոչ նախորդ և վոչ ել Տեոագա դարագլուխների որգանիւմների Տեո:

Թեև տարբեր դարագլուխների որգանիւմներն ազգակից չեն իրար, այնուամենայնիվ նրանք առաջ յեկել վորոշ հաջորդականութեամբ, այն է՝ նախ պարզ ձևերը, ապա բարդ տեսակները, իսկ ամենավերջինը՝ մարդը: Ամեն մի Տեղաշրջումից Տեոո ավելի բարդ, ավելի կատարյալ որգանիւմներ էին առաջ գալիս: Հենց դրանով ել Կյուվիենն բացատրում է այն փաստը, վոր հին յերկրաբանական շերշերում գտնված են ավելի պարզ որգանիւմների մնացորդներ, իսկ նոր շերտերի մնացորդներն ավելի բարդ կազմութիւն ունին:

«Կատաստրոֆների» թեորիայի ճայրահեղ Տեոուողներն (Ինչպես Ագասիլ, Դ՛Որբինյի) աստվածաբանական տեսակետի վրա Տեուվելով՝ վորոշակի շեշտում էին, վոր կատաստրոֆները կտրուկ փոփոխութիւններ էին առաջ բերում յերկրի վրա, միաժամանակ վոչնչացնում ամբողջ որգանական աշխարհը, և յերբ քառսն անցնում եր, նորից իսաշաշութիւն տիրում՝ աստված ստեղծում եր նոր կենդանիներ և նոր բույսեր: Դ՛Որբինյի կարծիքով մեր յերկիրը քսան յոթ Տեղաշրջում է ապրել, ապա ուրեմն այդքան անգամ ել աստված ստիպված է յեղել նոր որգանիւմներ ստեղծագործել:

Կատաստրոֆների թեորիան՝ թեև վորոշ ժամանակ ընդունված էր գիտության մեջ, բայց նա իհարկե չկարողացավ եվոլուցիոն թեորիայի առաջն առնել: Ավելի լիս նա կորցրեց իր նշանակությունը, յերբ հաճախ ու հաճախ էր հայտնվում այն միտքը, թե մեր Ձերկիրը փոփոխության է յենթարկվել վոչ թե շնորհիվ յերկրաբանական հեղաշրջումների, այլ աստիճանաբար, և նրա վրա գործել են նույն յերկրաբանական պրոցեսները, ինչպիսին վոր այժմ էլ նկատվում են:

Ասկայն կյուվիեյի արժեքը վոչ միայն բնագիտության, այլ և հատկապես եվոլուցիոն թեորիայի համար շատ մեծ է: նրա հիմնած համեմատական անատոմիան, պալեոնտոլոգիան (նրա որոշ վորպես գիտություն հանաչված) մեծ չափով նպաստեցին եվոլուցիոն թեորիայի արագընթաց վարգացման:

- Հարցեր:
1. Ինչ հոսանքներ կային եվոլուցիոն թեորիայի նկատմամբ:
 2. Յեկեղեցու և պետության վերաբերմունքը դեպի եվոլուցիայի գաղափարը:
 3. Ինչով բացատրել եվոլուցիոնիստների տատանումները:
 4. Ո՞վ էր կարևոր Լիլենեյը:
 5. Ինչու առաջադրվեց որգանիվմների դասակարգությունը:
 6. Ի՞նչ բնույթ ուներ Բոննեյի դասակարգությունը:
 7. Ի՞նչ բնույթ ուներ Լիլենեյի դասակարգությունը:
 8. նոր դասակարգության միավորները (մեծ ու փոքր խմբավորումներ):
 9. Վոր միավորը Լիլենեյի հետո յե լրացված:
 10. Ի՞նչ է կրկնակի անվանակոչությունը:
 11. Վերլուծե՛ք շների և կատուների ցեղը (համաձայն Լիլենեյի՝ սենը):

12. Ինչ հիման վրա յեր Լիլենեյը ստորաբաժանում որգանիվմները:
13. Ի՞նչով է տարբերվում Լիլենեյան դասակարգությունը այժմյանից:
14. Ի՞նչով է շեկավարվում արդի դասակարգությունը:
15. Լիլենեյի դասակարգության դրական կողմերը:
16. Ինչ նշանակություն ունեցավ նրա դասակարգությունն եվոլուցիոն թեորիայի համար:
17. Ի՞նչ նշանակություն ունեցավ նրա դասակարգությունը:
18. Ինչ տեսակետ ուներ Լիլենեյն եվոլուցիոն թեորիայի նկատմամբ:
19. Ո՞վ էր ժորժ կյուվիեն:
20. Ի՞նչ գիտությունների հիմք է դրել նա:
21. Ի՞նչ է պալեոնտոլոգիան (հնաբանությունը):
22. Ի՞նչպիսի մնացորդներ են գտնում յերկրակեղևի շերտերում:
23. Ինչպիսի որգանիվմների մնացորդներ էյին գտնում:
24. Ի՞նչ է «հատկանիշների կորրեկցիա»:
25. Ի՞նչ կարծիք ուներ կյուվիեն որգանիվմների եվոլուցիայի մասին:
26. Ի՞նչ է նրա «կատաստրոֆների թեորիան»:
27. Ի՞նչ կարծիք էյին կատաստրոֆների մասին ԴՈրբիլի, Ագասիլը:
28. Ի՞նչ արժեք ունեցան կյուվիեյի հետախույզություններն եվոլուցիոն թեորիայի համար:



ԵՎՈՂՈՒՑԻՈՆ ԹԵՈՐԻԱՅԻ

ԿՈՉՄՆԱԿԻՑՆԵՐԸ :

Բյուֆֆոն . նրա տեսակետը որգանիվմների փոփոխության մասին , փոփոխականության գործոնները . մարդու նագումը : երազմ հարվին . նրա եվոլուցիոն թեորիայի սկզբունքները , աբիոգենեզ : Տրեվիրանոս : Գեոթե . նրա տեսակետն եվոլուցիայի մասին , մարդու նագումը , միջնոտային վուկրները : Փարիվյան գիտական բանավեճը 1830 թվ. : եվոլուցիոնիվմի պարտության պատճառները : ԼԱՄԱՐԿ . Ինչ է տեսակը , փոփոխականության գործոններ , միջավայրի դերը . գործարանների վարժության և վոչ վարժության հետևանքները (որինականներ . կարապ , Խլուրդ , յեղջրավոր կենդանիներ , կետը) : Մարդու նագումը : ներքին վգայման գաղափարը :

Դարվինիյ առաջ ել կային համոզված եվոլուցիոնիստներ , բայց նրանք այնքան աննշան ուժ եյին ներկայացնում , վոր շատ քչերն եյին ուշադրություն դարձնում նրանց գաղափարներին : Իհարկե ժամանակն ել աննպաստ եր . բայի այդ , եվոլուցիոնիստներն ավելի շատ թեորետիկներ եյին , նրանց փաստացի ապացոյցները բավարար չափով համոզիչ չեյին , նույնիսկ անարժեք՝ գիտական տեսակետից : ժամանակի ազդեցությունըն այնքան ուժեղ եր , վոր յերբեմն նույնիսկ համոզված եվոլուցիոնիստները , պիջողական մի քանի , բոլորովին անտեղի և ավելորդ մեկնաբանություններով եյին նաեկում իրանց առաջադրած գիտական գաղափարները , մտքերը :

ԲՅՈՒՅՅՈՆ . 1707-1788.

Բյուֆֆոնն ընդունելով որգանիվմների փոփոխականության փաստը , միաժամանակ փորձում է այդ յերեկոյսթի պատճառները լուսաբանել : նա այն կարծի-

քի յե , վոր ամեն մի որգանիվմ հեշտությամբ կարող է կորցնել իր այս կամ այն սկզբնական հատկանիշները , փոփոխվել և նոր հատկանիշներ ձեռք բերել : Յեվ այդպես , վորքան շատ նոր հատկանիշներ պարգանան , այնքան ավելի կփոփոխվի տվյալ որգանիվմը , ապա վորոչ ժամանակի ընթացքում առաջ կը գա բոլորովին նոր որգանական տեսակ : Փոփոխականության շնորհիվ է , վոր պարգայել են յեղան բազմաթիվ ձեվերը . բոլոր որգանիվմներն ել իրար հետ ազգակցաբար կապված են : Ըստ Բյուֆֆոնի՝ փոփոխականության նպաստող ամենագլխավոր գործոնն է շրջապատի բեռնությունը , կլիմայական և պայմանները : միջավայրի անմիջական ազդեցությամբ առաջ են գալիս որգանիվմների այս կամ այն փոփոխությունները : Գիտնականներից շատերը , նույնիսկ եվոլուցիոնիստները , վախենում եյին գիտական լուսաբանությամբ մոտենալ , մանավանդ , մարդու նագման հարցին և ճգնում եյին այս կամ այն կերպ պարզել և մարդու տեղը բնության մեջ : Այդպիսիներից եր և Բյուֆֆոնը : նրա կարծիքով չկային այլաստեւված մարդ է , իսկ մարդն ազգակից չէ կենդանիներին և բոլորովին այլ նագում ունի : Այդ միտքը նա այսպես է հիմնավորում . մարդը հեշտությամբ հարմարվում , ընտելանում է տարբեր կլիմայական պայմանների , մինչ դեռ կենդանիները վուրկ են այդ ընդունակությունից , հետևաբար ասում է նա . « մարդը - յերկնքի ստեղծագործություն է , իսկ կենդանին - յերկրի արտադրություն : » Իհարկե այս վոչ գիտական միտքն անկեղծ դատողության հետևանք չէ . ժամանակն եր ազդել նրա վրա և ստիպել նրան անել այդ ավելորդ լրացումը : Ավելի յևս շեշտվում է նրա յերկյուղը , նրա

ակամա տատանումները, յերբ նման մի ուրիշ ֆան-
տաստիկ սուվեր ել գտում է իր հիմնական որգանիզմ-
ների փոփոխականության վերաբերյալ գաղափարների
վրա: Եւրոպեական հյուսիսային ասում է: լավ հայտնի յե, վոր բո-
լոր կենդանիներին ստեղծել է արարիչը:"

Բյուֆֆոնի նման եր իր զգուշութեամբ և երազմ Դար-
վինը (Քարլ Դարվինի պապը): նա բնագետ եր և բա-
նաստեղծ: Հնարարյան բանաստեղծ-բնագետների նման,
նա յևս գրեց մի պոեմ՝ «Բնութեան տաճար» վերնա-
գրով: իր պոեմում հանգերով խոսում է տարբեր բնա-
կան յերեւոյթների մասին, արծարծում է փիլիսոփայա-
կան, բնագիտական գաղափարները, խոսում է և եվոլյու-
ցիոն թեորիայի մասին:

Հնդուներով եվոլուցիայի սկզբունքը բնութեան յերե-
ւոյթների նկատմամբ: նա փորձում է լուսաբանել
այդ եվոլուցիայի պատճառները: Որգանական աշխարհը
չարգացել է աստիճանաբար, սկզբում յեղել են ամենա-
պարզ ձեւերը, ապա հաջորդաբար բարդանալով՝ առանց
են գալիս ավելի կատարյալ, բարձր ձեւեր, իսկ ամե-
նից վերջը - մարդը:

Երազմ Դարվինը կոչմանակից եր արիոգենեցի, սա-
կայն նա կրկնում է հնարարյան գիտնականների սխալ-
ները. նրա կարծիքով ել ինքնագոյացմամբ առաջ են
գալիս վոչ միայն պարզ, ստորին որգանական ձևերը, այլ
և սյնախիսի բարդ որգանիզմներ, ինչպես՝ առյուծը, ար-
եիվը, ոճը: Խոնավութեան և տաքութեան ներգործու-
թեամբ հողը փոփոխվելով՝ նոր հատկութեւուններ է ստա-
նում, այն է՝ կրճատվում է ու զգայուն դառնում, ապա
միմիանց յեռուկից որգանիզմներ է առաջ բերում: Առա-
ջին կյանքը զարգացել է ինչ վոր սկզբնական կենսաթե-

ւերից:

Երազմ Դարվին նախազգայ գոյութեան կռվի նշա-
նակութեւունը բնութեան մեջ, խոսեց նաև ինական, եւրո-
իսկ սեռական ընտրութեան մասին: Այդ սկզբունքները
հետագայում ավելի հիմնավորեց նրա թոռ՝ Չարլզ Դար-
վինը:

Սակայն ժամանակը երազմ Դարվինի վրա ել թո-
ղեց իր կեիքը: Համոզված եվոլուցիոնիստը կարծե-
ս իր «մեղքերը» քաղելու համար վերոհիշյալ պոեմում չի
մոռանում փառաբանել «ամենակարող արարչին», վորին
և վերագրում է բոլոր ստեղծագործութեւունները (տես՝
«Բնութեան տաճար»):

Ավելի համարձակ եր գերմանացի բնագետ Տրեվի-
րանուսը: Առանց տատանումների, առանց վոր և է
զիջողական արդարացուցիչ խոսքերի, նա պաշտպանում
է որգանական աշխարհի զարգացման և փոփոխակա-
նութեան թեորիան և այդ եվոլուցիոնական հունի մեջ
մտնում է և մարդուն:

Գեոլոգ . 1749-1832.

Պայեառ, ուժեղ փալփող աստղի տպավորութեւուն
է թողնում բոլոր բնագետների շարքում, համաշխար-
հային հռչակ վայելող գերմանացի բանաստեղծ՝ Վոլֆ-
գանգ Գեոթեեն: Վոչ միայն անվանի բանաստեղծ է նա,
այլ և այնպիսի բնագետ, վոր պատվավոր տեղ կարող
եր բռնել բնագիտութեան պատմութեան մեջ: Նրա հրա-
պարակ իջավ վորպես համարձակ և համոզված եվո-
լուցիոնիստ: Վորոչ բնագետ մասնագետների հակա-
ռակ՝ նա անվախ, առանց զիջողութեան, հայտարարեց
իրեն եվոլուցիոն թեորիայի կոչմանակից: նրա արտահայ-
տան մտքերի համաձայն՝ բնութեան մեջ ամեն

ինչ յենթակա յե մշտնջենական եվոլուցիայի, ամեն
ինչ անկայուն է և փոփոխական. բոլոր որգանիվմ-
ներն իրար ալգակից են և եվոլուցիոն վարգայման,
փոփոխականութայն արդյունք: Բոլորն ել սկզբնական և
հիմնական նախատիպարի փոփոխութայն, վարգայման
արդյունք են: նույնիսկ ամեն մի որգանիվմ, իր մար-
մնի սասմաններում - մարմնական մի հիմնական մա-
սի եվոլուցիայի արդյունք է: Թերևս այս վերջին մտքի
մեջ կարելի յե տեսնել քոչարկված ապագա բջջային
թերոհան: Այժմ մեզ համար անհերքելի փաստ է, վոր
իսկապես ամեն մի որգանիվմ մի հիմնական մասի,
այն է՝ բեղմնավորված ձվային բջջի վարգայման ար-
դյունք է: Գեոթեյի ժամանակ դեռևս բջիջների մասին
գաղափար չունեին: Գեոթեն իր այդ միտքը հիմնավորում
է փորձնական դիտողութուններով: նա կանգ է առնում
ճաշիկների վրա: նրա կարծիքով ճաշկի բոլոր մասերն
արդյունք են մի հիմնական մասի՝ տերևի ձևափոխու-
թյան, եվոլուցիայի: Առեջքը, վարսանդը և պսակաթերթիկ-
ները վարգայել են տերևից: Ուրեմն տերևը բույսի
